

Բ Ժ Ի Ծ Կ Ը

(Անցած գնացած օրերից)

Այն տարին սե էր լուսացել Խ. գիւղի համար. չար բաղդը իր բոլոր արհաւիրքներով նստել էր և չէր ուզում տեղից շարժուել։ Մանուկների ժանտախտը՝ — գիֆտերիտը աւերած էր գործում։ Գիւղացիք իրանք էլ չը գիտէին, թէ արգարադատ Աստուածը ինչու է իրանց պատժում և ո՛չ թափառական թուրքերին, որոնք այս տարի ամեն տարուայ պէս արածացրին իրանց կանաչ արտերը և հնձած խուրձերը կրակեցին...

Աշակերտներին մի շաբթից աւել էր՝ հիւանդութեան պատճառով արձակել էի և ազատ ժամանակս անց էի կացնում հիւանդներին այցելելով ու հիւանդութեան դէմ մաքառելու հարկաւոր գիտելիքները բացատրելով, որքան նրանք յայտնի էին այդ ժամանակ։

Գիւղի ծայրում զօրքի բնակատեղին էր. այնտեղ զօրանոցներ էին շինուած։ Զօրքը ունէր իր սեփական բժիշկը և դեղատունը. իսկ գիւղացիներին եթէ դեղ հարկաւորուէր, պէտք է քաղաքից բերել տային։ Զօրքի բժիշկը շատ տարօրինակ մարդ էր. ինչպէս պատմում էին, նա առանց երեք լուբլին ստանալու չէր համաձայնուում հիւանդներին նայելու և իւրաքանչիւր դիմողին բացատրում էր, որ ինքը զինուորական բժիշկ է,

հետևապէս պարտաւոր չէ գիւղացիներին այցելելու. եթէ գիւղացիք ցանկանում են բժիշկ ունենալ, թող իրան տարեկան որոշ վարձատրութիւն տան, այն ժամանակ նա ձրի կը նայէ բոլոր հիւանդներին:

Մայիսի վերջն էր. հիւանդութիւնն առերևոյթ դադարել էր. դպրոցում պարապմունքներն սկսում էին: Զատիկից յետոյ դեռ ոչ մի դժբաղդ դէպք չէր պատահել. ամենքը միամտացել էին, և մահուան դէպքերը կամաց-կամաց մոռացւում էին:

Մի օր նկատում եմ՝ աշակերտներից մէկը բացակայ է. ընկերները յայտնեցին, որ Արշակը—այդպէս էր նրա անունը—դաշտում զբօսանքի գնացած ժամանակ վազելիս ընկել Գր ու ոտը քիչ ցաւում է, այդպէս էին բացատրել ծնողները: Ես կէսօրից յետոյ պատահեցի Արշակի հօրը, որը նոյնը կրկնեց:

Բայց մի քանի օր անցած Արշակի հայրը վազելով դաշիս է մօտս ու արտասուելով յայտնում, որ իր որդու ոչ թէ ոտն է ցաւում, այլ նա բկուռոյցից է հիւանդ և շատ ծանր է:

—Մի Աստուած է մնացել, վարժապետ, երեխայիս մի օգնութիւն արահ:

—Բայց ինչու դու ասում էիր, որ ոտն է ցաւում:

—Վախեցայ, ի՜նչ անեմ: Ասում են՝ զօրքի բժիշկը հրաման է տուել ֆելդշերին, որ ում տան հիւանդ է եղել կամ կայ, շորերն այրեն և հիւանդներին էլ դեղով սպանեն:

Ես նրան հասկացրի, որ ամենը սուտ տարածած լուրեր են, այլև համոզեցի, որ գնայ բժշկին վերցնէ զայ: Բայց չ'անցաւ մի քանի րոպէ, նա վերադարձաւ ու յայտնեց, որ բժիշկը չէ համաձայնում՝ առարկելով, որ պարտաւոր չէ: Ես գնացի բժշկին խնդրելու:

Բժիշկն ապրում էր մի երկյարկանի տան վերին մասում:

Ես դուռը ծեծեցի:

Մի քանի րոպէից յետոյ դուռը բացուեց, և երևաց

մի կարճահասակ, կարմիր թշերով, խոր ընկած խորամանկ աչքերով, երկար կարմիր բեշմետ հագած կողակշ—
—Ի՞նչ էք ուզում, հարցրեց նա:

—Բժշկին եմ ուզում, պատասխանեցի ես,—տա՛նն է:

—Ինչի՞ համար էք ուզում:

—Պէտք է տանեմ հիւանդի մօտ:

Նա բիչ կանգ առաւ, մտածեց, մի երկու անգամ դիտեց ինձ ոտիցս մինչև գլուխ և ասաց.

—Բժիշկը թէև տանն է, բայց պատուիրեց ոչ օրիչ՝ ընդունել:

—Գուցէ նա պատուիրել է առողջ մարդկանց չ'ընդունել. ես կարծում եմ, որ բժիշկը հիւանդների մասին այդպիսի կարգադրութիւն արած չի լինիլ:

—Պարո՛ն, ես կը գնամ ձեր մասին կը յայտնեմ, միայն իմացէք, որ մեր բժիշկը ձրի հիւանդներին չէ նայում, խորամանկ ժպտով աւելացրեց նա:

Նա դուռը կողպեց ու գնաց:

Մի քանի րոպէից յետոյ նա վերադարձաւ ու յայտնեց, որ բժիշկն ինձ խնդրում է վերև:

Ես բարձրացայ:

Պատշգամբում կանգնած էր ինքը բժիշկը. նա մի կարճահասակ, լայն թև ու թիկունքով, կրակոտ սև աչքերով ու թաւ յօնքերով մարդ էր. նրա դուրս ընկած կուրծքը, զինուորական զգեստը, երկայն սև բեղերը և և խիտ սև միրուքը առաջին անգամ նայողի վրայ ազդու տպաւորութիւն էին թողնում:

Ես յայտնեցի նրան իմ դալու նպատակը:

—Սակայն պէտք է իմանաք, որ ես նշանակուած եմ զօրքի համար և ոչ գիւղացիների. նրանք կարող են բաղադրից իրանց համար բժիշկ բերել:

—Պ. բժիշկ, ես կարծում եմ, որ ձեր պաշտօնը չի արգելում ձեզ ազատ ժամանակ գիւղացի հիւանդներին էլ այցելելու:

—Այդ ճիշտ է, որ չի արգելում, բայց միթէ ես պարտաւոր եմ:

—Ո՛չ թէ դուք պարտաւոր էք, այլ իւրաքանչիւրը մեզանից, մանաւանդ ով բաղդ է ունենում որեւէ մասնազիտութիւն ուսումնասիրելու, պարտաւոր է դէպի հասարակութիւնն ունեցած իր պարտքի մի չնչին մասը գէթ կատարելու։ Իսկ դէպի գիւղացին անպայման պարտաւոր ենք ձեռք մեկնելու, որովհետեւ նա խեղճ է և տգէտ։

—Օ... օ... այդ բառերն ինձ յիշեցրին ուսումնարանական կեանքը. այդպիսի ֆրազներ մենք սովորաբար նստարանի վրայ ենք գործածում, իսկ այժմ կեանքի շեմքումն ենք. բոլորովին այլ պայմաններ են։

Մի բոպէ ես մնացի լուռ. համալսարան, բարձրագոյն կրթութիւն, ապահով վիճակ, լաւ պաշտօն, ամեն յարմարութիւն, իսկ միւս կողմից խեղճ գիւղացիներ, որոնք օրուայ ապրուստը հազար ու մի թուր ու մուրով են ձեռք բերում, կատարեալ խաւար մտաւոր աշխարհ, ամենաչնչին առիթներից մահ.— ահա այս բոլորը պատկերացաւ իմ աչքին։

—Պարոն բժիշկ, մի կողմ թողնենք այն բոլորը, որոնք յիշեցնում են ձեզ ձեր նստարանական կեանքը, ստացէ՛ք ձեր նեղութեան վարձը և բարեհաճեցէ՛ք այցելելու հիւանդին։

—Եթէ այդպէս է, հիւանդին բերել տուէք մօտս։

Այլևս աւելորդ էր խօսակցութիւնը երկարացնել, ես դուրս եկայ, պատուիրեցի Արշակի հօրը, որ գնայ հիւանդին բերէ։

Կարճ ժամանակից յետոյ հայրը որդուն շալակած բերաւ։ Սարսափելի էր խեղճի դրութիւնը. նա մեծ դժուարութեամբ էր շնչում և բերանը շարունակ բաց էր պահում կոկորդի ուռոյցքից։

Բժիշկը զննեց կոկորդը և ասաց, որ դիֆտերիաի ամենածանր տեսակն է և շատ է ուշացրած, ուստի և առողջանալը դժուար յուսալի է. յամենայն դէպս նա դեղատոմսը գրեց ու տուաւ։

Ես վճարեցի երեք բուբլին ու խնդրեցի մի փոքրիկ

տոմսակ էլ գրել զինուորական դեղատանը, որպէսզի դեղը բաց թողնեն, հակառակ դէպքում մինչև քաղաքից ստանալը ուշ կը տեւէ, այլև պատուիրել ֆելդշերին, որպէսզի նա գնայ և իր ձեռքով գործածել տայ:

Բժիշկը կատարեց խնդիրս՝ աւելացնելով, որ ֆելդշերին էլ պէտք է վարձատրել:

Դեռ դեղորայքը նոր էի ստացել դեղատանից ու ֆելդշերին ճանապարհել, երբ լսեցի, որ խեղճ Արշակը չը դիմանալով իրան խեղդող մահուան ճիրաններին, հոգին աւանդել էր: Յաւալի էր սգաւոր ծնողների դուռ-թիւնը. նրանք զրկուեցին իրանց միակ զաւակից:

Նրա մահը շատ տխուր տպաւորութիւն գործեց ինձ վրայ. Արշակը չորրորդ աշակերտն էր, որ պակասում էր այդ աարին դպրոցից:

*
* *

Նրեկոյեան տխուր տպաւորութիւնների տակ դուրս եկայ դէպի գիւղի ծայրում գտնուած ծառուղին: Այդ ծառուղին, որ տնկել էին գիւղն առաջին անգամ ոտք դրած զօրքերը, թէև անխնամ, բայց հիանալի զօսարան է: Նրկու բաւականին երկար ճեմելիքներ, որոնց երկու կողմից շարուած էին հսկայական լորիններն ու ալացիաները, տարուայ այդ ամիսներում իրանց չորս կողմն անուշաբոյր հոտ էին սփռում:

Նստած ծառերի տակ գտնուած խարխուլ նստարանի վրայ՝ վերջին անգամ ուղում էի շնչել գիւղական պարզ բնութեան մաքուր օդը: Մի քանի օրից յետոյ պէտք է ամարային արձակուրդներն սկսուէին, իսկ այնուհետև թափառական հայ ուսուցչին, ով գիտէ, բազմազան կողմ պիտի նետէր: Բաւական էին առաջնորդի ձիապան-տիրացուի ստոր բամբասանքները կամ զանազան մութ գործերի հեղինակ-քահանայի մի հարուածը, որ ամբողջ ծրագիրներ քանդուէին, ու շատ գեղեցիկ յոյսեր փշրուէին...

Կիսատ լուսնի ցուրտ ճառագայթները դժուարութեամբ էին թափանցում սաղարթախիտ ծառերի արանքով. երկնքում հազիւ նշմարւում էին փայլիլոյ աստղերը և ո՛րքան բարձր։ Ոչ մի մարդկային արարած չը կայ. ամենքը թաղնուել են՝ կարծես չուղենալով բնութեան հանդատութիւնը վրդովելէ Փշում է մեղմ, բայց սառն զեփիւռը. հազիւ լսում է գիշերային միջատների սուլոցը, որը միախառնուելով ծառերի տափով հոսող ջրի քչիչոցի ու խոխոջի հետ, մի նոր ներդաշնակութիւն են կազմում։

Մինչդեռ խոր մտածմունքների մէջ էի, յանկարծ լսեցի ֆլէյտի մեղմ ելեէջեր, որոնք դնալով՝ աւելի ու աւելի գործեղացան. ուշքս ամբողջապէս կենտրոնացրի նուագի վրայ։

Մօտիկ լսող քայլերի ձայնն սթափեցրեց ինձ։ Մթութեան մէջ նշմարեցի մի ստուեր, որը կամաց-կամաց մօտենում էր։

Եկուորը մօտեցաւ, քիչ կռացաւ աւելի լաւ դիտելու համար և ճանաչելով գոչեց.

— Օ՛, բարի երեկոյ, պ. ուսուցիչ։

— Բարև ձեզ, Թովմաս, այդ ո՞րտեղից այդպէս ուշ։

— Իմ սովորական ճանապարհորդութիւնից. իսկ դուք այս ժամին այստեղ ի՞նչ էք շինում։

— Ո՛չինչ, եղանակը զով է, և օգը թարմ, գրաւուեցի, մի քիչ երկար նստեցի. դեռ վրայ էլ աւելացրած սրնգի գեղեցիկ ներդաշնակութիւնը։

— Այո՛, երբեմն պատահում է, որ մարդ ինքնամոռացութեան մէջ սովորականից շատ է մի տեղ մնում. ինձ հետ էլ է պատահում։ Գիտէ՞ք, ես էլ մարդ եմ և նոյն զգայարաններն ունիմ, ինչ-որ ուրիշները, թէև մի քանիսը արդէն բթացած։ Ես էլ երբեմն զգում էի բնութեան գեղեցիկութիւնը և հիանում նրա վեհութեամբ... հէնց այժմ էլ տխուր մելոդիաները այնպէս են ազդում ինձ վրայ, որ ինքս ինձ կորցնում եմ։ Հաւատացնում եմ ձեզ, որ այն պարոնի նուագելը ինձ աւելի է տրա-

մաղբում բմբռնելու մարդկանց չարագործութիւնները ու հեռանալու անիրաւ գործերից, քան իրան՝ այդ նուագողին:

—Ո՞վ է այն նուագողը, հարցրի ես:

Չարագործների թագաւորը, սակայն որի անիրաւութիւնները միշտ ծածկւում են հողի տակ:

—Ես ոչինչ չը հասկացայ, խնդրեմ նստէք ու աւելի պարզ բացատրէք ձեր միտքը. միայն զգոյշ նստեցէք, նստարանը խարխուլ է, չը լինի թէ երկուսս էլ ընկնենք:

—Այդ պարոն «Ղհուգին» էք ուզում ճանաչել, չէ՞. նա զինուորական բժիշկն է: Թէեւ ես էլ Ղհուգ (ЖИДУГ) եմ, բայց երգւում եմ, որ ես նրա նման չեմ: Ես, ճիշտ է, օղի չատ եմ գործածում, բայց իմ սիրտը անարատ է, նա խղճալ գիտէ: Իմ ամբողջ յանցանքս միայն նրա մէջն է կայանում, որ ահա, օրինակ, այժմ խնդրում եմ ձեզանից հինգ կոպէկ, որպէսզի սառած մարմինս տաքացնեմ. յուսով եմ որ չէք մերժիլ:

Նոր յիշեցի, որ բժշկի տան դէպի բակը դուրս բերած պատշգամբը ուղիղ ծառուղու դէմ յանդիման է:

—Բայց բժիշկը, կարծեմ, ամուսնացած չէ, ո՞վ է մօտի նստած կինը:

—Միթէ ներկայ ժամանակում ամուսնացածին աւուրուց կարելի է զանազանել. կինը փոստով ուղարկւող ծանրոցքի նման յատուկ պատուէրով է ստացւում: Նա բժշկի սիրուհին է, որին նոր է բերել տուել թիֆլիսից տանջելու համար...

Թովմասի մեր խօսակցութեան ընթացքում յայտնած մի քանի բառերը նոր հետաքրքրութիւն զարթեցրին իմ մէջ դէպի բժիշկը:

—Իսկ դուք նրան մօտիկուց ճանաչում էք, հարցրի ես:

—Հինգ մատիս պէս. այստեղ մարդ լինի, որի կեանքը խեղճ Թովմասը ուսումնասիրած չը լինի: Սակայն հինգ կոպէկս չը մոռանաք:

—Եո քանի անգամ եմ ասել, որ օղու համար քեզ

փող չեմ տալ. դու առանց այն էլ խմիչքից անդգայա-
ցել ես: Միթէ չես ուզում կարգին մարդ լինել:

—Է՛ր լաւ, լաւ, պ. ուսուցիչ, մի բարկանաք. ձեր
փողով պապիրոս կը գնեմ, իսկ ուրիշի տուածով—օղի.
այժմ գո՛հ էք:

Նա տուի նրան ցանկացածը: Նա ստեց իմ կողքին
և նոյնպէս ընկղմուեց խոր մտածմունքների մէջ:

Թովմասը գիւղում գրագրի պաշտօն էր կատարում.
Նա պաշտօնական գրագիր չէր և ոտճիկ չէր ստանում.
որովհետեւ գրիչը լաւ էր և գիտէր գիւղական խնդիրնե-
րի ձեւակերպելը, դրա համար և գիւղացիք յաճախ էին
նրան դիմում զանազան թղթեր գրելու համար, որոնց
համար՝ նա ստանում էր քսան կոպէկից մինչև մի թուր-
լի: Նա ամբողջ օրերով հարբած էր լինում: Փողոցի որ
անկիւնում պատահէր, պառկում էր, ընում. պատառո-
տած հագուստով, կարկատած ֆուրաժկայով, մի ոտին
կօշիկ, միւսին կրկնակօշիկ նա միշտ գինետան առաջ էր
լինում. նրա գրասենեակը այստեղ էր, և դրա համար
էլ գիւղացիք կարէք եղած ժամանակ գիմում էին ու-
ղիւ գինետուն՝ Թովմասին որոնելու: Նրանք գրելու
վարձը Թովմասի խնդրով տալիս էին գինեվաճառին
ու միասին կոնծում:

Ամենքը ճանաչում էին Թովմասին. ամենքի հետ
նա հանարներ էր անում ու զանազան անեկդոտներ
պատմում: Նա երբեմն պարծենում էր, որ գիմնադիա-
յումն է սովորել և շատ հաւանական էր, որովհետեւ
բոլոր առարկաներից համարեւ տեղեկութիւններ ու-
նէր: Նա շատ սիրում էր պատմութիւնից սրեւ գէպք
պատմել. այդ ժամանակ նա ճառախօսի էր նմանում:
Նա լուրջ գէմք էր ստանում ու ձեռքերով զանազան
չարժողութիւններ անում: Երբ մօտը փող չէր լինում և
ոչ մի տեղից յոյս չէր ունենում ստանալու, նա երբեմն
դիմում էր իրան ծանօթներին ու օգու փող խնդրում:
Ոչ դք չէր մերժում բարի Թովմասի չնչին խնդիրը:

—Լսիր, Թովմաս, ի՜նչ ես մտածում:

—Բժշկի մասին:

—Ինչո՞ւ:

—Է՛հ, հին բաներ եմ յիշում, հետաքրքրում է քեզ:

—Ձափազանց, եթէ այդ բժշկի մասին է:

—Հրէայ Իսահակը Թիֆլիսում մանրավաճառ էր, այսպէս սկսեց Թովմասը. նա շատ բարի մարդ էր. չը նայելով հրէաների ժլատութեանը, նրա գուռը միշտ բաց էր հիւրերի համար, ուստի և բարբլին նրան միշտ երկրորդ Իսահակ նահապետ էր կոչում: Նրա կինը վախճանուելուց յետոյ թողել էր փոքրահասակ Աբրահամին խեղճ Իսահակի խնամքին: Չը նայելով այն բոլոր գժուարութիւններին, որ առաջանում են մարդուս կինը վախճանուելուց յետոյ, մանաւանդ երբ փոքրահասակ զաւակ է լինում, Իսահակը ոչ մի կերպ տեղի չը տուաւ ազգականների թախանձանքներին ու չամուսնացաւ: Նա միշտ իր պատճառաբանութիւնը այսպէս էր վերջացնում.

—«Ես մտադիր եմ Աբրահամին ուսում տալ ու մեծ մարդ դարձնել, եթէ ամուսնանամ, ծախքերս կը շատանան ու միջոցներս չեն ներիլ մտադրութիւնս իրագործելու»:

—Երբ Աբրահամը վեց տարեկան դարձաւ, նա իսկոյն ուսուցիչ վարձեց, որը պտտրաստում էր նրան գիմնադիայի համար: Եւ Իսահակը չէր սխալուել. նրա որդին հէնց սկզբից այնպէս շնորհք ցոյց տուեց, որ գըրաւեց ուսուցչի ուշադրութիւնը իր վրայ: Հօր ուրախութեանը չափ չը կար, երբ որդին յաջող քննութիւնից յետոյ ընդունուեց գիմնադիայում: Այդտեղ էլ Աբրահամը յետ չը մնաց ընկերներից, ուսուցիչները նրա մէջ արտաբոյ կարգի ընդունակութիւն էին նկատում, մանաւանդ լեզուների մէջ: Իսկ հայրը ամեն կերպ աշխատում էր որդու բոլոր պէտքերը ժամանակին հոգալ և ոչ մի գժուարութեան առաջ չէր կանգնում: Չը նայելով իր միջոցների սղութեանը, նա հագցնում էր որդուն հարուստներից ոչ պակաս: Աբրահամը իւրաքանչիւր

տարի փոխում էր դասարանը երբեմն ընծայով, երբեմն գովասանական թղթով. քանի նա մեծանում էր, այնքան էլ կարիքը շատանում էր, ու խեղճ Իսահակի դրուժիւնը աւելի դժուարանում. ընդամենը մի տարի էր մնացել գիմնազիական դասընթացը աւարտելուն. Իսահակը մեծ հոգսերի մէջ էր. նա վճռել էր որդուն համալսարան ուղարկելու, բայց միջոցները բոլորովին չէին ներում. նրա փոքրիկ խանութում շատ բան չը կար, որովհետեւ եղած փողը ծախսում էր որդու վրայ, իսկ ապառիկ քիչ բան էին բաց թողնում ծախելու: Նա վճռել էր պարտքի դիմելու. բայց ուրիշներից տեղեկացել էր, որ հինգ տարի համալսարանում սովորելու համար առնուազն երեք հազար ըուրլի էր հարկաւոր. այդպիսի գումարը միանգամից իրան ոչ ոք չէր տալ, որովհետեւ, ինչ տեսակ էլ որ նա ապրէր, դարձեալ չէր կարող մի քանի տարում այդ փողը վերադարձնել, թէեւ յոյս ունէր, որ Աբրահամը աւարտելուց յետոյ իրան անպատճառ կ'օգնէ: Մաս-մաս էլ չէր կարող ստանալ, որովհետեւ այդքան ծանօթներ չ'ունէր. իսկ երբ հաշուում էր այդ փողի տոկոսը, այն ժամանակ կատարեալ յուսահատում էր:

— Իմ հայրս ոսկերիչ էր և Իսահակի խանութին կից արհեստանոց ունէր. այդ ժամանակ ես էլ գիմնազիայի առաջին դասարանումն էի: Նա շատ անգամ էր գալիս հօրս մօտ յուսահատուած, իր դրուժիւնը բացատրում: Հայրս նրան յարգում էր, որպէս աշխատասէր ու ազնիւ մարդու և միշտ յուսագրում էր: Բայց ահա Աբրահամը գիմնազիան աւարտեց արծաթէ մեդալով, և Իսահակը կէս ուրախ կէս ախուր եկաւ մեր արհեստանոցը:

— «Հարեւան Մովսէս, ես այժմ եկել եմ մօտդ, որպէսզի քո տուած բազմաթիւ յոյսերի փոխարէն մի գործնական միջոց ցոյց տաս»:— Այս ասելով նա հօրս առաջ դրաւ Աբրահամի վկայագիրը և արծաթէ մեդալը:

— «Ի՞նչ պիտի անել սրանց համար», յուսահատութեամբ գոչեց նա։

— Հայրս վերցրաւ վկայագիրքը, կարդաց, նայեց մեղալին ու մի րոպէ լուռ մնալուց յետոյ ասաց.

— «Երացի Իսահակ, քո որդին կատարել է իր պարտքը. քո նրա վրայ դրած աշխատանքդ և ծախսած փողերդ իզուր չեն անցել. ահա նա վերադարձնում է սրանցով դրանց փոխարէնը. արժէ այդպիսի որդուն միջոց տալ կատարելագործուելու աւելի բարձր գիտութիւնների մէջ, որպէսզի նա դէպի քեզ ունեցած բարոյական բարձր պարտականութիւններն էլ կատարէ։ Գիտեմ, միջոցներդ չեն ներում փափագդ կատարելու։ Ես, ինչպէս միշտ յուսադրել եմ, այժմ էլ խոստանում եմ գործով օգնել։ Հինգ հարիւր ըուբլի փող ունիմ, որ գանձարանումն է. այդ փողը դրել եմ այնտեղ, որպէսզի կամաց-կամաց աւելացնեմ ու ապագայում թո՛վմասի ուսման վրայ ծախսեմ. բայց որովհետեւ թո՛վմասը դեռ ևս եօթը տարուց յետոյ պէտք է աւարտէ, իսկ դրացի Իսահակը նեղութեան մէջ է, մանաւանդ որ փողը դարձեալ նոյն նպատակի համար պէտք է գործադրուի, ուստի այդ գումարը այսօրուանից դնում եմ քո տրամադրութեան տակ, որպէսզի դրանով քո որդու համալսարանի առաջին տարուայ ծախքերը հոգաս։ Իսկ դու չորս տարուայ ընթացքում խոստացիր, որ նոյն գումարը կը մտցնես գանձարանը թո՛վմասի ուսման համար ծախսելու։

Իսահակը ուրախութիւնից քիչ էր մնում արտասուէր. նա մի քանի անգամ շնորհակալութիւն արաւ և հօրս խոստացաւ պայմանները սրբութեամբ կատարելու։

Բացի այդ՝ հայրս խնդրեց ծանօթ վաճառականներէից՝ Իսահակին ապառիկ ապրանք բաց թողնելու։ Այդպիսով նա թէ որդու առաջին տարուայ ծախքը ապահովեցրեց և թէ միջոց ունեցաւ հօրս պարտքի մի մասը վերադարձնել։ Հայրս տեսնելով նրա ճշտապահութիւնը և որդու՝ Աբրահամի համալսարանումն էլ ցոյց

տուած յառաջադիմութիւնը, որովհետեւ նա արդէն փոխադրուել էր երկրորդ լսարանը, մէկ օր կանչեց Իսահակին խորհրդի և այսպէս ասաց.

— «Իրացի Իսահակ, Աբրահամը արդէն փոխադրուել է համալսարանի երկրորդ լսարանը, առաջիկայ տարուայ ծախքերի համար պէտք է մտածել: Ես խօսեցի քո եղբայր և մեր մօտ ծանօթ Յովսէփի հետ և բացատրեցի ամեն բան: Նա թէև քեզ հետ հաշտ չէ, բայց զիջեց իմ թախանձանքներին և խոստացաւ իմ երաշխաւորութեամբ քո որդու ծախքերը հոգալ մինչև համալսարանը աւարտելը այն պայմանով, որ որդիդ ուսումն աւարտելուց յետոյ կամաց-կամաց վերադարձնէ նրա ծախսած փողերը՝ հաշւելով հինգ տոկոս: Եթէ աւարտելուց մի տարի անցնէ, և Աբրահամը ոչ մի կոպէկ չը վճարէ պարտքից, այն ժամանակ ես պարտաւորուում եմ նրա փողերը իմ միջոցներիցս վերադարձնել: Ես այս պատասխանատուութիւնը յանձն առայ՝ գլխաւորապէս ի նկատի առնելով քո ազնուութիւնը ու ճշտապահութիւնդ: Յուսով եմ, որ Աբրահամը ինձ չի թողնիլ ամօթով ուրիշների մօտ»:

— «Եղբայր Մովսէս, չը գիտեմ՝ շնորհակալութիւնս ինչպէս յայտնեմ քեզ, այսուհետեւ իմ եղբայրս ոչ թէ Յովսէփն է, այլ դու. ես յուսով եմ, որ Աբրահամը աւարտելուց նոյնպիսի խնամք պիտի տանէ Թովմասի համար, ինչպէս դու իրան համար: Եւ միթէ համալրաւորան աւարտած Աբրահամը կը թողնէ, որ իր հայրը՝ խեղճ մանրամասնաւ Իսահակը գլխիկոր ու ամօթով մընայ իրան բարեբար եղբայր Մովսէսի մօտ»:

— Իսահակը ունէր մի եղբայր Յովսէփ անունով. նա միջակ հարստութեան տէր մարդ էր: Չը նայելով որ Իսահակից մեծ էր տարիքով և յիսունի մօտ էր, Յովսէփը սիրահարուում է մի այրի հայ կնոջ վրայ, որը մի կատարեալ գեղեցկուհի էր, և ամուսնանում է: Այդ ամուսնութիւնից ծնւում է մի աղջիկ: Մայրը ծննդեան վրայ մեռնում է, իսկ Յովսէփը դայեակների խնամքով

մեծացնում է գտերը: Ուղան, այդպէս էր նրա անունը, մօրիցը յետ չէր մնում գեղեցկութեամբ: Յովսէփը իր եղբայր Իսահակից վաղուց բաժանուած էր և ինչ-ինչ հաշիւների պատճառով նրա հետ յարաբերութիւն չունէր:

—Հայրս և Իսահակը Յովսէփից ստացան երկու հազար ռուբլի, դրին գանձարանը, որպէսզի մաս-մաս ուղարկեն Աբրահամին: Իսկ Իսահակը ամեն ջանք գործադրում էր, որ թէ ծախքի պակասը ինքը լրացնէ և թէ աշխատէ քիչ էլ պարտքիցը վճարել: Բայց առածն ասում է. «Մարդս մտադրում է, իսկ Աստուած կարգադրում»: Այդ միևնոյն բանը պատահեց խեղճ Իսահակի հետ: Աբրահամը չորրորդ լսարանից փոխուել էր վերջինը, երբ հայրը սաստիկ հիւանդացաւ: Մահամերձ հայրը հռազբեց, ու որդին եկաւ: Մուսացայասելու, որ Աբրահամը բժշկութիւն էր սովորում: Որդու և բըժիշկների ջանքերը՝ Իսահակին առողջացնելու, զուր անցան: Նա կանչեց որդուն, հօրս և ինձ ու վերջին անգամ այսպէս խօսեց.

—Աբրահամ, ինչ որ ցանկանում էի, թէ և կատարեալ չը տեսայ, բայց մասամբ իրագործուած են ցանկութիւններս, ես աշխատում էի, որ դու բարձր ուսում ստանաս, լաւ մարդ դառնաս, փառք Աստուծոյ, ուսումդ վերջացնելու մօտ ես շնորհիւ մեր բարերար ազնիւ Մովսէս եղբորս: Նա քեզ համար արաւ այն, ինչ որ ոչ մէկը մեր ազգականներից չէր անիլ. ահա մեր ազնիւ բարեկամի որդին՝ Թովմասը, նրան քեզ եմ յանձնում, նրան կ'օգնես հասնելու այն նպատակին, որին քեզ հասցրաւ նրա հայրը: Մենք բացի մեր բարոյական պարտականութիւնից զէպի ազնիւ դրացիս՝ փող էլ ենք պարտ: Քո առաջին տարուայ ծախքիցը նրան պարտ եմ երկու հարիւր ռուբլի, այլև իմ հարազատ եղբօրս՝ Յովսէփին երկու հազար ռուբլի իր տոկոսներով, որից հինգ հարիւր ռուբլին գանձարանումն է քո գալ տարուայ ծախքերիդ համար. այդ պարտքը պէտք է դու վճարես

ուսումը վերջացնելուց յետոյ մաս-մասն եթէ առաջին տարին անուշադիր թողեցիր, իմացիր, որ մեր ազնիւ բարեկամ Մովսէսին շատ նեղ դրութեան մէջ դրած կը լինինք, և այն ժամանակ ես ու դու ոչ մի արդարանալու միջոց չենք ունենալ նրա մօտ, իսկ հասարակութիւնը մեզ «ապերախտ» ու «ղաւաճան» անունը կը տայ»:

— Հայր, խոստանում եմ ասածներդ սրբութեամբ կատարելը:

— Հայրը երկար լուռ նայում էր մերթ հօրս, մերթ որդուն: Այդ օրը երեկոյեան նա վախճանուեց: Աբրահամը հօրը թաղեց, գանձարանից ստացաւ հինգ հարիւր բուբլին ու ճանապարհուեց Պետերբուրգ:

— Այդ օրից անցաւ մի տարի: Աբրահամը բժշկութեան վկայական ստացած եկաւ Թիֆլիս և իջաւ հօրեղբօր տանը: Պէտք է խոստովանուել, որ Յովսէփը՝ չը նայելով դէպի իր եղբայր Իսահակին ունեցած ատելութեանը, Աբրահամին շատ սիրով ընդունեց, իսկ հօրսն ափնչեւ անգամ չ'եկաւ տեսնելու: Որովհետեւ մենք Յովսէփի հետ շատ մօտ յարաբերութեան մէջ էինք, ուստի նրանց տանն էլ պատահեցինք Աբրահամին: Այդ ժամանակ նա բոլորովին փոխուել էր, վերին աստիճանի գոռողացել, նա հօրս հետ այնպէս էր խօսում, կարծես առաջին անգամն են պատահում: Ես գիմնադիայի հինգերորդ դասարանումն էի: Հայրս և ես, երբ դուրս եկանք Յովսէփինց տնից, նա դարձաւ ինձ և ասաց.

— «Թովմաս, եթէ դու էլ աւարտելու լինիս որեւէ բարձր ուսում, ծանօթներիդ հետ այդպէս չը վարուես: Այդ տղայի վրայ ուսման ոչ մի հետք չէ մնացել»:

— Ուղան էլ գիմնադիայումն էր սովորում: Նա այդ ժամանակ տասնեւչորս տարեկան գեղեցիկուհի էր. սեւաչեայ, սև երկար մազերով, նուրբ կազմուածքով: Մենք յաճախ պատահում էինք իրար: Նա շատ բան էր պատմում նորաւարտ բժշկի մասին, թէ ինչպէս նա ամփոփ օրերով դէս-դէն է չրջում զանազան կասկածելի

վարքի տէր կանանց հետ, թէ ինչպէս ըոպէական սիրահարութիւններ էր սարքում ու ժամադրութիւններ նշանակում, թէ ինչպէս շատ անգամ իրան Ռոզային էլ զգուեցնում է անվայել խօսակցութիւններով:

—Մի անգամ մի ինչոր սիրային արկած է ունենում մի կնոյ հետ. վերջինս յայտնում է, որ նրա հետ այլևս չէ ցանկանում ծանօթութիւն պահպանել, որովհետեւ հրէայ է: Նա հետեւեալ օրը և եթ մկրտութեան վկայական է ներկայացնում նրան: Ռոզայի հայրը՝ Յովսէփը այդ բանը չը գիտէր, թէ չէ նա իսկոյն կը վռնդէր նրան իր տնից. նա մկրտուածներին տանել չէր կարող: Այդ բանը պատահամբ Ռոզան իմանում է, երբ Աբրահամը նրան ծանօթացնում է իր կնքահօր հետ:

—Յովսէփը այդ միջոցին մի մեծ կապալ ունէր ձեռքին. նա տեսնելով, որ ահագին փնասի տակ պէտք է ընկնէ ու մեծ էլ տուգանք պիտի վճարէ, մտածելուց կաթուած է ստանում: Բիժիկները յայտնում են, որ հագիւ մի ամիս կարող է ապրել. նա խօսել չէր կարողանում: Հայրս գնում է այցելութեան. նա կիսատապաւտ հասկացնում է հօրս, որ Իսահակի երկու հազար ռուբլու մուրհակը, որին ստորագրել էր հայրս որպէս երաշխաւոր, վերագարծրել է Աբրահամին և ընծայել նրան, այլև երկու հազար ռուբլի կանխիկ փող, որպէսզի Ռոզային խնամք տանէ ու ամուսնացնէ ժամանակին: Հայրս միամտացած վերադառնում է տուն: Այնուհետև որքան աշխատում է նա Աբրահամին պատահելու, ոչ մի կերպ չի յաջողում:

—«Այդ տղան մեր գլխին պատուհաս պիտի բերէ», —ասում էր հայրս շատ անգամ: Եւ այդպէս էլ եղաւ: Մեռաւ Յովսէփը: Նրա ունեցած-չունեցածի վրայ խնամակալներ ու հոգաբարձուներ նշանակուեցին: Յովսէփը գրաւոր ոչ մի կտակ չէր թողել, բայց որովհետեւ հոգաբարձուները Աբրահամին մօտ էին, ուստի և Ռոզային յանձնեցին նրան և լիակատար իրաւունք տուին նրա համար ծախքեր անելու: Աբրահամը երկու հազար ռուբ-

լու մուրհակն էլ է յանձնում հոգաբարձուներին, որպէս զի գանձէն, միայն այն պայմանով, որ նրանից հազար ռուբլին իրան տան, մի մասն էլ հոգաբարձուները իրանք իրանց օգտին վերցնեն։ Մուրհակի նշանակած ժամանակից մի տարի արդէն անցել էր, և Աբրահամը ոչ մի կոպէկ փող չէր տուել։ Հօրս կանչեցին գատարան։ Խեղճը քիչ էր մնացել՝ յուսահատութիւնից ինքնասպանութիւն գործէր։ Հոգաբարձուները հօրս ամենաօխերիմ թնամիներն էին. նրանք կատարողական թուղթ ստացան հօրս ունեցածի վրայ, որովհետև Աբրահամը բացէիբաց մերժել էր վճարելու՝ առարկելով, որ ոչինչ չ'ունի։ Դատաւորները իրանք էլ մնացել էին զարմացած, երբ հայրս բոլոր եղբւրթիւնը նրանց միառմի պատմեց։ Բայց ինչ կարող էին անել. նրանք էլ պարտաւոր էին հնազանդուելու օրէնքին։

—Հոգաբարձուները կատարողական թղթի զօրութեամբ ծախեցին ամեն բան և ստացան երկու հազար ռուբլին իր տոկոսներով. իմ ուսմանս համար հօրս հաւաքած մի քանի հարիւր ռուբլին էլ գնաց Աբրահամի ու գաժան հոգաբարձուների գրպանը։ Մենք մնացինք առանց որևէ միջոցի։ Հայրս մի քանի անգամ յուսահատական փորձեր արաւ վրէժխնդիր լինելու ապերախտ Աբրահամից, բայց մենք նրան միշտ յետ էինք պահում։ Ես գիմնազիայի օթերորդ դասարանումն էի, չ'ունենալով ապրուստի ոչ մի միջոց՝ թողեցի ուսումնարանն ու դուրս եկայ հօրս օգնելու։

—Ես երեք քոյր ունէի, և երկու էլ եղբայր էինք։ Քոյրերիցս երկուսը ամուսնացած էին, որոնց ամուսինները այնքան էլ հարուստ չէին. ամենից փոքր քրոջս մեծ քոյրս վերցրաւ խնամելու, եղբօրս՝ միջակ քոյրս, ես մտայ մի գրասենեակ, որտեղ ամսական երեսուն ռուբլի էի ստանում և գրանով ես, հայրս ու մայրս մի կերպ կառավարւում էինք, մինչև որ հայրս կարողանար որևէ պարագմունք գտնելու։

—Բայց կարծես գժբաղդութիւնը գժբաղդու-

Թեան յետևից է գալիս. այդ տարին ինձ զինուոր կանչեցին, և հայրս մնաց գլխովին անօգնական: Նա կատարեալ յուսահատուել էր, երբ ես վերջին մնաս բարեն էի ասում: Մայրս մի կողմից էր լաց լինում, քոյրս միւս կողմից, հայրս էլ չը կարողացաւ իրան պահել ու դառն հեկեկաց, որից ես էլ արտասուեցի: Այդպէս նրանց թողեցի անգուժ բաղդի կամքին, իսկ ես եկայ ի. գիւղը ծառայելու:

*
* *

— Զինուորական ծառայութիւնս ի. գիւղում այնքան էլ դժուար չէր անցում. ես շուտով գրաւեցի գլխաւորներին ուշադրութիւնը իմ ընդունակութիւններով և աչքաբացութեամբ:

— Ծառայութիւնս վերջանալու մօտ էր արդէն, երբ մեզ մօտ բժիշկ նշանակուեց մի ոմն Ֆ... աղգանունով. դա ոչ այլ ոք էր, եթէ ոչ Իսահակի որդի Աբրահամը: Ես առաջին անգամ պատահելուց իսկոյն ճանաչեցի նրան, և թէեւ նա այնպէս ցոյց տուաւ, իբր թէ չէ ճանաչում, բայց. երբ մի առ մի յիշեցրի, նա ինձ իր մօտ հրաւիրեց:

— Կէսօրից յետոյ ժամի 4-ին գնացի բժշկի տունը. նոր էի ներս մտել ու բարևել, երբ գնդապետի տնից մարդ եկաւ նրան կանչելու, որովհետեւ հիւանդ կար: Որքան էլ նա չը ցանկանար ինձ մենակ թողնելու, այնուամենայնիւ ոչ մի առիթ չը գտաւ մեր այցելութեան շուտով վախճան տալու, անյարմար էր. ուստի խնդրեց դահլիճում նստել ու սպասել իրան: Ես պարզ կերպով նկատեցի նրա շփոթմունքը, թէեւ նա դիտմամբ էր չը փոթւում, որպէսզի ես դուրս գնամ, սակայն ես ցոյց տուի, իբր թէ չեմ նկատում ու նստեցի: Նա յետ նայելով՝ շտապով դուրս գնաց ու ինչ որ բան պատահեց իրան ծառայող զինուորին:

— Ես մենակ էի և կարծում էի, որ տանը ոչ ոք

չը կայ. բայց որքան եղաւ իմ զարմանքը, երբ հարեան սենեակի դուռը բացուեց ու մի գեղատեսիլ օրիորդ նազելի քայլուածքով մտաւ ու շփոթուած մնաց կանգնած դռան շեմքում: Նա տեսնելով, որ ես մաքուր հագնուած եմ, քիչ մօտեցաւ ու բարեկեց: Ես էլ բարեկեցի և սկսեցի դիտել նրա գունատ դէմքը:

—Ա՛հ, այդ դո՞ւ ես, Ռոզա, որքան փոխուել ես, գոչեցի ես վերկենալով:

—Բարեւ, հօրեղբայր Թովմաս, բարեւ, դուք էլ բիշ չէք փոխուել: Որքան ժամանակ է չենք տեսել իրար», ապա Ռոզան մօտենալով:

—Ինչո՞ւ այդպէս գունատ և նիհար ես, Ռոզա, հարցրի ես:

—Ճէ՛հ, հօրեղբայր Թովմաս, ինչ է իմ կեանքը, որ այսպէս չը լինեմ: Ինչեր ասես, որ չեմ կրում այս դաժան բռնակալից. միթէ մինչև կեանքիս վերջը պէտք է բանտարկուած մնամ... Նա չը կարողացաւ խօսքը վերջացնել, ու արտասուքը առուի պէս հոսեց աչքերից: Այնուհետեւ նա միառմի պատմեց այն բոլոր խստութիւնները, որ գործադրում էր բժիշկը նրան որևէ տեղ չը թողնելու համար. մինչև անգամ հասարակ զբօսանքը արգելուած էր. և այդ բոլորը նա պատճառաբանում էր նրանով, որ հասարակութիւնը փչացած է, և որևէ մէկ սրիկայ կարող էր անվայել վարմունքով նրա կուսական սիրտը արատաւորել: Բացի այդ՝ նա յայտնեց, թէ բժիշկը պայմանաւորուել էր հոգաբարձուների հետ և մեր ունեցածը աճրդի դրել. թէ ինչպէս հօր ունեցածը բժիշկը վատնում է զանազան անբարոյական կանանց հետ և զանազան ծախքեր ցոյց տալիս, որ իբր թէ իրան համար է արել...

—Այդ միջոցին դառը բացուեց և մի ուրիշ նորաստի կին մտաւ. նա էլ Ռոզայի նման գունատ ու նիհար էր:

—Ահա պարոն բժշկի երկրորդ զոհը», — ասաց Ռոզան՝ ձեռքը մեկնելով դէպի նորաստի կիներ: Նա բացատրե-

րեց, որ այդ զոհը գիմնազիայում սովորող աղքատ ծընողների աղջիկ էր, որին բժիշկը խաբէութեամբ փախցընում է՝ խոստանալով ամուսնանալ նրա հետ, իսկ այժմ այդպէս բանտարկած տանջում է։ Ես այդ բոլորից եզրակացրի, որ Աբրահամը՝ այժմ բժիշկ Ֆ.-ն նոյն դահան է, ինչ որ առաջ էր։ Ես Ռոզային խոստացայ երբեմն-երբեմն այցելել իրան և եթէ կարողանամ, որեւէ կերպ թեթեւցնել նրա դրութիւնը։

—Մինչ այս, մինչ այն, եկաւ բժիշկը։ Ռոզան և նորատի կինը լսելով նրա ոտների ձայնը, շտապեցին միւս սենեակ՝ դուռը պինդ կողպելով։ Բժիշկը քրտնած էր, երևում էր՝ շատ էր անհանգստացել։

—«Ներողութիւն, թովմաս, որ քեզ մենակ թողեցի. ինչ անեմ, եթէ ապահովուած մարդ լինէի, պաշտօնի չէի նայիլ։ Կարիքը ստիպում է մարդուն խոնարհուել հանգամանքների առաջ»,—ասաց բժիշկը։

—Այդ բռեքրի տակ ես հասկացայ հետեւեալը. «Թովմաս, շատ իզուր ես արել, որ առանց ինձ նստել ես այստեղ»։ Եւ թերեւս նոյն կարիքն էր, որ բժշկին ստիպեց զոհելու մի ամբողջ ընտանիք։

—Մեր խօսակցութիւնը առօրեայ կեանքի մասին էր. բժիշկը առհասարակ խուսափում էր զիպել այն վերքերին, որ նա հասցրել էր մեզ։ Կէս ժամ մնալուց յետոյ ես դուրս եկայ։ Այնուհետեւ բժիշկը միշտ խոյս էր տալիս ինձանից. նոր հասկացայ, որ նրա մօտ ծառայող զինուորը իմ և Ռոզայի խօսակցութեան ժամանակ մի քանի անգամ պատուհանի առաջով դէս ու դէն էր անցել և, հաւանական էր, բժշկին յայտնել. ինչպէս յետոյ Ռոզայից իմացայ, բժիշկը իմ դուրս գնալուց յետոյ իր սիրուհուն սաստիկ ծեծել էր, այնպէս որ խեղճը երեք օր հիւանդ պառկել էր, իսկ իրան Ռոզային լաւ նախատել ու հայհոյել։

—Մեր առաջին տեսակցութեան օրից անցել էր մի ամիս։ Այնուհետեւ իմ մտածողութիւնս կենտրոնացած էր Ռոզայի վրայ. միջոցներ էի մտածում նրա դրութիւնը

Թեթևացներու։ Շատ մտածելուց յետոյ ես որոշեցի առանձին բնակարանում ապրել։ Բժշկի բնակարանին կից տուն վարձեցի, որտեղ ապրում էր գիւղական հայուսուցիչը։ Վահան էր նրա անունը, միջակ հասակով, նուրբ կազմուածքով ու գեղեցիկ խոհուն աչքերով մի երիտասարդ էր։ Չը նայելով՝ նա նոր էր քսան և մէկ տարին լրացընում, բայց խօսելիս փորձուած ու աշխարհ տեսած մարդու տպաւորութիւն էր թողնում։ Նրա միակ հոգսը ուսումնարանն էր ու միակ զբաղմունքը ազատ ժամերին ընթերցանութիւնը։ Սկզբից հէնց նա իր ազնիւ բնաւորութեամբ զրաւեց ինձ, և մենք շատ մօտ բարեկամացանք։ Դիւզացիք նրան անշափ յարգում ու սիրում էին, նրա մի խօսքը օրէնք էր նրանց համար։ Նրա եռանդուն աշխատութեան շնորհիւ դպրոցը շատ բարեկարգուեց։ Միայն նա շարունակ գանգատուում էր իր ինչ-որ մեծաւորներից, որոնք իբր թէ չէին թողնում իրան մի տեղ հանգիստ մնալու։

— Նոր բնակարանս տեղափոխուելուց երեք օր յետոյ ես կարողացայ տեսնել Ռոզային իրանց պարտէզում զբօսնելիս։ Ես ծածուկ նշանով հասկացրի իմ այնտեղ գտնուելս։ Նա մօտեցաւ ցանկապատին և պատմեց իրանց գլխին եկածը իմ առաջին այցելութիւնից յետոյ։ Ես նրան հանգստացրի, որ այնտեղ եմ ապրում և կ'աշխատեմ աւելի մօտիկուց օգնել նրան, որքան հնարաւոր է։ Ես նրան ուսուցչի մասին էլ յայտնեցի, թէ ինչպէս նա խելօք երիտասարդ է, և շատ հաւանական է, որ միասին կարողանանք մի բան անել։ Նա ցանկացաւ տեսնել ուսուցչին։ Ես կանչեցի Վահանին և հեռուից ծանօթացրի իրար հետ, որովհետեւ մեզ բաժանում էր ցանկապատը։

— Դրանից յետոյ մենք համարեան ամեն օր տեսակցում էինք իրար հետ և ծրագրներ կազմում։ Բժիշկը չը գիտէր իմ նոր բնակարան տեղափոխուելս, ուստի և Ռոզայի պարտէզում զբօսնելը ոչ մի կասկած չէր յարուցանում նրա մէջ։

—Մի օր Ռոզան Վահանին յայտնեց, որ հայերէն լեզուն շատ է ուղղում սովորել, միայն ափսոսում է, ու միջոց չ'ունէ։ Վահանը իսկոյն միջոցը ասաց օրեկան մի քանի բառ ուսներէն տառերով գրում էր, դիմացն էլ թարգմանութիւնը և ցանկապատի արանքով տալիս Ռոզային. նա այդ բառերը բերան սովորում էր և հետեւալ օրը կրկնում. իսկ Վահանը ուղղում էր նրա արտասանութիւնը։ Ես նկատեցի, որ Ռոզան Վահանին անտարբեր աչքով չէ նայում. Վահանն էլ մեծ եռանդով սովորեցնում էր հայերէն։ Այնպէս որ մի քանի ամսից յետոյ իմ ներկայութեամբ նրանք իրար հետ հայերէն խօսում էին, իսկ ես ոչինչ չէի հասկանում։ Ես Ռոզայի ազատութեան ամենայարմար միջոցը համարում էի Վահանի հետ ամուսնութիւնը և դրա համար մի անգամ նրա կարծիքը իմանալու համար ասացի.

—«Վահան, երեւի ոչ ոքի այնպիսի բաղդ չէ վիճակում, ինչպէս քեզ»։

—«Ինչո՞ւ համար, թովմաս», հարցրեց նա՝ բարձրացնելով իր խելօք աչքերը։

—«Հարսնացուիդ ինքդ ես ուսուցանում»։

—«Մի՞թէ կարծում ես, որ Ռոզան կարող է իմ հարսնացուս լինել», պատասխանեց նա առանց վրդովուելու։

—«Ինչո՞ւ չէ կարող»։

—«Նախ նա հրէուհի է, ես հայ. այդ արդէն մի բաւականին մեծ պատնէշ է։ Երկրորդ նա, երեւի, հարուստ է և սովոր է աւելի յարմար կեանքի։ Ես իմ սուղ միջոցով չեմ կարող այն յարմարութիւնները ստեղծել նրա համար, ինչ որ մի ապահովուած աստիճանաւոր։ Իսկ ես, ո՞վ գիտէ, առաջիկայ տարին իմ բարեկամ թովմասի հետ այսպէս կը զրուցեմ, թէ՞ Պարսկաստանի որեւէ խուլ անկիւնում կը լինեմ, որովհետեւ մտադիր եմ տեղափոխուել այնտեղ»։

—«Այժմ, պ. Վահան, լսեցէք իմ պատասխաններս. առաջինը՝ նա իսկական հրէուհի չէ. նրա մայրը հայ է եղել. եւթադրենք, թէ նա մինչև անգամ հրէուհի է,

դարձեալ այդ բանը ձեզ պէս կրթուած մարդու համար նշանակութիւն չը պիտի ունենայ: Ինչ վերաբերում է ձեր երկրորդ կէտին, պէտք է ինքներդ էլ լաւ հասկանաք, որ Ռուզայի ներկայ դրութիւնը նախանձելի չէ. մեր հոգսը ամբողջապէս նրա համար է, որպէսզի նրան ազատենք այդ դրութիւնից: Եւ վերջապէս ի նկատի առէք, որ դուք նրան առնելով՝ մարդկային մի զօհ էք փրկում. ձեր արածը վեհանձն և ազնիւ գործ կը լինի»:

—Վարդանը չը պատասխանեց. նա ընկաւ խոր մտածութեան մէջ. ինչպէս երևում էր, իմ ճառս իզուր չէր անցել: Նա մի քանի օր չէր խօսում. պարապմունքից վերադառնալուց յետոյ շարունակ անցուդարձ էր անում ու մտածում: Երեք օրից յետոյ նա սովորական Վահանը դարձաւ և կարծես մի բան վճռել էր:

—Այսպէս՝ ծաղկափթիթ գարուն էր: Մի օր ես և Վահանը շրջում էինք մեր պարտէզում. իմ վերջին խօսակցութիւնից արդէն մի ամիս անցել էր: Ռուզան ցանկապատի մօտ ծառի տակ սպասում էր մեզ. մենք մօտեցանք: Ռուզան շատ տխուր էր, սովորականից աւելի տխուր: Մեր հարցին նա պատասխանեց, որ երեք օր առաջ, երբ ինքը պատշգամբում կանգնած է լինում, իրանց տունն է գալիս Ա... սպան. մինչև իրան սենեակ մտնելը սպան կարողանում է լաւ տեսնել ու սիրահարուել: Նա ուղղակի բժշկից խնդրում է Ռուզայի ձեռքը, որովհետեւ բժիշկը յայտնում է, որ իրան քոյրն է: Սկզբում բժիշկը չէ համաձայնում՝ յայտնելով, որ օրիորդը չը մկրտուած հրէայ է. բայց երբ սպան խօստանում է հազար ըուբլի տալ բժշկին իբրեւ գրաւական և փոխանակ ամուսնանալու՝ իբրեւ կին պահել, բժիշկը խօսք է տալիս: Այնպէս որ հաւանական է, մի քանի օրից յետոյ իրան բռնի կը տանեն սպայի մօտ: Ռուզան վերջին խօսքը արտասանելիս լաց եղաւ:

—«Յուզւա՛, բացազանչեցի ես: Այնքան անմեղ զօհե՛-

ըը բաւական չէին, այժմ էլ այս անմեղ արարածին է ուզում յօշոտել: Միթէ ցուգան էլ այդպէս չ'արաւ»:

—«Թովմաս, դու մոռանում ես, որ քրիստոնեայ չես»,—բոլորովին անվրդով պատասխանեց Վահանը:

—«Ճիշտ է՝ ես քրիստոնեայ չեմ, բայց ցուգայի աւրածը մինչև անգամ մի ամենահասարակ մահկանացուի դէմ պախարակելի է»:

—«Բժիշկը կրթուած գազան է, և հարկաւոր է վճըռական քայլի դիմել: Ռոզան,—գարձաւ դէպի նա Վահանը,—ի՛նչ միջոց ես դու ընտրում այդ փորձանքից ազատուելու համար»:

—«Ուրիշ ոչ մի միջոց չը կայ, բացի ինքնասպան լինելուց», հեկեկալով պատասխանեց Ռոզան:

—«Իսկ եթէ քեզ ես այստեղից հեռացնեմ, որեւէ ազգական կամ սրտացաւ ունի՞ս, որպէսզի նրա մօտ կարողանաս պատուով ապրել»:

—«Բացի քեզանից ուրիշը չ'ունիմ,—ասաց լացակուժած Ռոզան.—հօրեղբայր Թովմասը այս բանը գիտէ»:

—«Վահան, շտապեցի վերջացնել ես.—Ռոզային քեզ եմ յանձնում, որպէս ազնիւ բարեկամիս»:

—«Ուրեմն վճռուած է, Ռոզա, վաղը ևեթ մենք կը ճանապարհուենք: Առայժմ գնա պտտրաստուիր, իսկ վաղը առաւօտեան կը գաս իմանալու ճանապարհուելու ժամը և տեղը»:

—«Ռոզան ուրախացած գնաց, ես նրանից աւելի էի ուրախացել: Վահանը շտապով դուրս եկաւ տնից»:

—Երեկոյեան Վահանը վերագարձաւ բաւականին ուշ, սկսեց գրքերը հաւաքել ու կապտել: Ես նրան սպասում էի իր սենեակում: Նրա ոչ մի շարժումից չփոթութիւն չէր նկատուում, ընդհակառակն՝ լուրջ վերաբերմունք դէպի անելիքը և տղամարդու վայել բաջութիւն էր երեւում նրա մէջ: Նա յայտնեց, որ ուշ գալու պաճառը մի գրութիւն էր, որ ոտացուել էր իր տեսչից: Տեսուչը այդ գրութեամբ պատուիրում էր ամարային արձակուրդները տալուց յետոյ հեռանալ դըպ-

րօցից և ուրիշ տեղ որոնել, որովհետև անցած սեպտեմբերի 1-ին առանց թեմական առաջնորդի կարգադրութեանն սպասելու ուսումը սկսել էր:

— «Ահա մեր վիճակը, Թովմաս եղբայր,— ասաց դառն ժպտով Վահանը. ինձ ինչո՞ւ համար են հեռացրելում, գիտե՞ս, որովհետև, ասում են, չափից դուրս պարտաճանաչ եմ եղել: Իսկ եթէ հակառակը գործէի, ո՞վ գիտէ, դուքէ, բոլորովին արձակէին պաշտօնիցս:— Ոչինչ, աւելացրեց տխուր ձայնով նա, մեր ուժերը ուրիշ տեղ կը փորձենք: Բարեբախտաբար ամեն բան վերջացած է. վաղը հանդէս և հաշվետուութիւն է. վերջին մնացած բանը կ'ասեմ մանգօկներին, դպրոցին և քեզ, Թովմաս եղբայր. այժմ այլեւս ես չեմ կասկածում իմ ուժերիս նկատմամբ, որովհետև... Ռողան հետս կը լինի»:

— Նա վերջին երեք բառը այնպիսի քաղցր ժրպտով արտասանեց և այնպիսի հայեացքով նայեց ինձ, որ մասամբ կարողացայ թափանցել նրա սրտի խորքը. այն լուրջ ու խոհուն աչքերը որքան գեղեցիկ էին այդ խօսքերն արտասանելիս: Ես համոզուեցի, որ Վահանը Ռողային շերտ սիրով է սիրում:

— Հետևեալ առաւօտեան, երբ ես պարապմունքի էի գնացել, գրասենեակում հաւաքուած սպաները սկսեցին իրար նորութիւններ յայտնել:

— «Գիտէ՞ք, պարոններ, դարձաւ դէպի նրանց մի ջահիլ վրացի սպայ. Ս... ովը մի հիանալի օրս է արել»:

— «Ի՞նչ է, ի՞նչ է, ամեն կողմից հարցրին սպաները»:

— «Մի հիանալի, մի չքնաղ օրիորդ է գտել, այն էլ հրէուհի»:

— «Զարմանալի է, այդ անպիտանին ի՞նչպէս է բախտը ժպտում: Ախր մենք նրանից պակաս չենք չարչարում, ինչո՞ւ է հէնց նրան յաջողում»,— նկատեց սպաներից մէկը:

— «Զարչարուելուց չէ, բարեկամ, պատասխանեց նորութիւն յայտնող սպան. փոքն է ամենը յաջողում»:

փողը. ամսական երկու հարիւր ընդլի փող է տնից բա-
տանում բացի ուճկից: Իսկ ես և դու մեր չնչին գրող-
ներով ամենայեւորին աղջկայ ուշքն էլ չենք կարող դը-
րաւել: Գիտե՞ս, նա այդ բաւականութեան համար վը-
ճարում է մի հազար ընդլի. հինգ հարիւրը արդէն կան-
խալճար է տուել»:

—Ո՛րհ, սատանան տանէ նրան, գոչեցին ամեն
կողմից: Եւ ո՞վ է այդ չքնաղ օրիորդի տէրը»:

—Մեր պարոն բժիշկը»:

—Ես այլեւս չը կարողացայ անտարբեր նստել. իս-
կոյն վերցրի գլխարկս ու դուրս գնացի: Իմ յետեւից եր-
կար լսում էր նրանց բարձրաձայն ծիծաղը և աղ-
մուկը:

—Վահանը ժամի 1-ին վերադարձաւ և յայտնեց,
որ ամեն բան վերջացրել է, Ռոզային էլ տեսել ու ե-
րեկոյեան ժամի 6-ին ժամանակ է նշանակել:

—«Գիտե՞ս, մեր բանը կարծես յաջողում է,—գոչեց
Վահանը. ես վերադառնալիս իմացայ պատահմամբ, որ
այս երեկոյեան ժամի 5-ին զինուորական աստիճանաւոր-
ները ամենքը կանչուած են գնդապետի մօտ հրա-
ւէրքի: Անշուշտ մեր բժիշկն էլ կը լինի նրանց թւում»:
Նրանք գիշերուայ ժամի 12-ից վաղ չեն ցրուիլ, իսկ
մինչև այդ մենք արդէն մեր նշանակած տեղը կը
լինինք: Ռոզան ժամի 6-ին պարտէզով կ'անցնէ մեզ
մօտ, ու իսկոյն կը ճանապարհուենք. կառքն էլ արդէն
վարձել եմ»:

—Սյդպէս էլ եղաւ. ժամի 6-ին կառքը մեր դռան
առաջ պատրաստ էր: Վահանը դուրս եկաւ պարտէզ և
Ռոզայի հետ միասին վերադարձաւ: Վահանը իսկոյն մի
թեթեւ եւփռնջի գցեց նրա ուսերին ու փոքրիկ մորթե-
գդակ ծածկեց նրա գլխին, Ռոզան կատարեալ լեռնա-
կանի տեսք ստացաւ: Վահանն էլ նոյնպէս հաղնուեց
ու վերցրաւ, չը գիտեմ որտեղից, արագածիդ հրացանը:
Ես զմայլուած նայում էի այդ բոլորին: Երբ ամեն բան
պատրաստ էր, Վահանը դարձաւ դէպի Ռոզան և ասաց.

—Ռո՛ղա, ահա այսքան ժամանակուայ մեր ծանօթութեան ընթացքում առաջին անգամ իմ ձեռքս մեկնում եմ քեզ: Համաձայն ես արդեօք պատկանելու ինձ: Մեր վկան թո՞վմաս եղբայրն է:

—Վահան, ես այսօրուանից քեզ եմ պատկանում. որպէս ապացոյց իմ անկեղծ սիրոյս՝ ես խոստանում եմ թո՞վմաս հօրեղբոր առաջ, որ կը սիրեմ այն դադափարները, որոնց դու ես ձգտում: Գնանք միասին սիրելու մանուկների այն շրջանը, առանց որին, ինչպէս դու ասում էիր, գոյութիւն չ'ունիս: Այդ դադափարին ծառայելով ես պարտական կը լինիմ քեզ:

—Նրանք «մնաս բարե» ասացին ինձ. ես արտասուեցի, Ռոզան էլ լաց եղաւ:

—«Մնաս բարե, թո՞վմաս եղբայր, եթէ որեւէ նեղութիւն կրես այս դէպքի համար, հաստատ հաւատացած եղիր, որ ազնիւ գործի համար է: Ես արդէն իմացայ, բժիշկը հրաւերքումն է: Մնաս բարեաւ, ասաց Վահանը, և երկուսը նստեցին կառք.

—Գնա՛ք բարե, Ռո՛ղա, Վահան: Աստուած, պահիր այդ ջահիշներին, արտասուելով աղօթեցի ես: Կառքը սլացաւ:

—Բժիշկը տուն է դառնում ուշ գիշերով, սենեակները շրջում ու երբ Ռոզային չէ գտնում, յարձակում է անպաշտպան զոհի՝ իր սիրունու վրայ: Ծեծից էր, թէ երկիւղից, նրա սիրունին երեք օրից յետոյ մեռնում է: Տեսնո՞ւմ էք այն առանձին խաչը, որը գերեզմանատնից դուրս է, ահա նա է, բժշկի գազանութեան վկան: Բժիշկը իր ծառայից դանդատւում է գնդապետին, որը վճռում է մի ամիս բանտարկել զինուորին նրա անուշադրութեան համար: Այնուհետև հերթը հասնում է ինձ: Մէկ օր տեսնեմ ինձ կանչում են գնդապետի մօտ: Ես իսկոյն գուշակեցի, թէ ինչ պիտի լինի: Գնդապետը զիմեց ինձ ու սառն կերպով ասաց.

—«Պրենկել, դու անպատուել ես բժշկին և նրա բնական զայրուածութեան շօշափել: Ես քեզանից այդպիսի

բան չէի սպասում, այսօրուանից արձակում ես պաշտօնից»։

—Եւ արձակուեցի։

—Դեռ ինձ պատահած դժբախտութեան մեծութիւնը ես չէի որոշել, երբ նոր փորձանքների ենթարկուեցի։ Քրոջիցս նամակ ստացայ, որ հաղորդում էր հօրս և մօրս մահը։ Ես ինձ բոլորովին կորցրի։

—Մի երեկոյ մտամոլոր շրջելիս՝ ծառուղու ծայրում պատահեցի բժշկին. կատաղած ուղիղ գիմեցի դէպի նա։ Նա նկատեց իմ քայլերու եղանակս և ուղեց խուսափել. բայց ես շուտ վրայ հասայ. չեմ յիշում, ինչպէս սկսեցի. միայն այսքանը լաւ գիտեմ, որ հաշիւ էի պահանջում, և երբ նա դժուարացաւ պատասխանել, սկսեցի անխնայ ծեծել, նա թողեց գլխարկը և գոռալով փախաւ։ Ես քիչ հանգարտուեցի, վերցրի գլխարկն ու գընացի տուն։

—Այնուհետեւ գիւղացիք ինձ գրագրի պաշտօն առաջարկեցին։ Ես ընդունեցի և մնացի գիւղում։ Օրերը գլորում էին միանման, կեանքիս մէջ ոչ մի փոփոխութիւն տեղի չէր ունենում, որովհետեւ ինձ հետ պատահած բոլոր արկածներից յետոյ մի տեսակ տխրութիւն էր եկել ինձ վրայ. ես ոչ խմում էի և ոչ էլ գիւղացիների սովորական զուարճութիւններին մասնակցում. ուստի գիւղացիք այնքան էլ բարեկամ չէին հետս։

—Իմ պաշտօն մտնելուցս արդէն անցել էր չորս ամիս։ Մէկ օր տանուտէրը կարմրած երեսով մօտեցաւ փողոցում ինձ և ասաց.

—«Պոմմ Մայսէլի, վաղը որդիս՝ Նիկոլայը ամուսնանում է. կնքահայրութեան պաշտօնը պէտք է յանձն առնես»։

—Ես չէի կարող մերժել, թէեւ սրտանց չէի ուզում հարսանիքին մասնակցել. կամաց-կամաց պատրաստուեցի գնալու։ Հագայ զինսւորութիւնից մնացած համազգեստս, սպիտակ ձեռնոցներս ու պսպղուն կօշիկներս և գնացի տանուտէրի տունը, ուր ժողովուած էին բազ-

մաթիւ հիւրեր. ես իմ արտաքինով գրաւեցի համարեան բոլորի ուշադրութիւնը: Նստել էինք ընթրիքի. ամենքը խօսում էին, ծիծաղում, զուարճանում, միայն ես լուռ էի. արդէն գլուխները տաքացել էր: Սանամայրը, որ մի կարմրերես կին էր, ուռած ըթով ու ճպճպան աչքերով, շարունակ ստիպում էր ինձ խմելու. ես սկզբում մերժում էի. բայց երբ մի բանի բաժակ համարեան ուժով նորապսակների կենացները խմեցնել տուին, այնուհետեւ ես ինքս էի վերցնում բաժակը, լըցնում ու խմում: Երբ գլուխս քիչ տաքացաւ, դուրս եկայ զովանալու: Մոռացայ ասելու, որ ձմեռ էր: Սանամայրը հետեւեց ինձ, իսկ նրա յետեւից մի կարճահասակ, չեչոտ և ուռած փորով կին: Սանամայրը սկսեց ինձ հետ քաղցր զրուցաբանել և միևնոյն ժամանակ ծանօթացրեց յետեւից եկող կնոջ հետ, որին Աւդոտիա էր կանչում: Քիչ յետոյ Աւդոտիան մնաց մօտս, իսկ սանամայրը ներս գնաց: Մեր խօսակցութիւնը շարունակւում էր, որը փոխուեց սիրաբանութեան: Չը գիտեմ ինչպէս էր, որ ես խոստացայ նրան սիրել... Մենք ներս դրնացինք. ես առաջարկեցի Աւդոտիային պարելու. նա իսկոյն վեր կացաւ ժպտալով:

— Կերուխումը վերջացաւ. հիւրերից մի բանիսը ցրուեցին, իսկ մեծ մասը հէնց այդտեղ պառկեց ընդեւում, որը յատակի, որը աթոռների, որը վառարանի վրայ, որովհետեւ անկարող էին շարժուել: Գիւղում հարսանիքը ոչ թէ վերջանում է, այլ հիւրերը անկարող են լինում այլեւ շարունակելու իրանց քէֆը: Ես սաստիկ հարբած էի և գլխացաւ էի զգում: առաջին անգամն էր ինձ հետ այդպիսի դէպք պատահում: Սանամայրը մօտեցաւ ինձ և խնդրեց, որ դնամ իրանց տունը գիշերեմ. ես համաձայնուեցի: Նրա տունը այդ միևնոյն բակումն էր. նա ինձ տարաւ այնտեղ. անկողին պատրաստեց ու խնդրեց պառկելու: Ես այնքան անըզգայ էի, որ չը նկատեցի, թէ ինչպէս մի ուրիշն էլ կողքովս պառկեց: Միայն առաւօտեան շատ ուշ, երբ սաս-

տիկ ծանր գլխով ու այրուող կոկորդով զարթնեցի, տեսայ, որ Աւգոտիան էլ մօտս է. ես որքան ամաչեցի այդ բուպէին: Մինչդեռ աշխատում էի մի կերպ հագնուել ու վերկենալ, ներս մտաւ սանամայրը, որ նկատելով իմ չփոթութիւնս՝ առաջարկեց մի բաժակ օղի խմել, որպէսզի գլխացաւս կտրէ. ես սկզբում մերժում էի, բայց տեսնելով, որ գլուխս պտտուելուց չեմ կարողանում նոյնիսկ նստած մնալ, համաձայնուեցի. Աւգոտիան էլ խմեց: Սանամայրը ստիպեց բաժակները կրկնել. ես դարձել էի հլու ոչխար. նրա հրամանները բոլորն էլ կատարում էի. և մենք դեռ բոլորովին չը հագնուած՝ նորից պառկեցինք... անի, այդ պառաւները... Երեք օրից յետոյ միայն ես ուշքի եկայ, բայց արդէն ուշ էր. ես նշանուած էի Աւգոտիայի հետ, և մեր հարսանիքը մի չարթից յետոյ պէտք է տօնուէր: Ծշմարիտ, իմ իսկական դատողութիւնս գլխումս չէր մնացել, թէ չէ՝ ես այդպիսի յիմարութիւն չէի անիլ: Հարսանիքս տօնեցինք, որքան կարելի էր, շքեղ: Երգ, պար, նուագածութիւն, այդ բոլորի հետ միասին հարբած հիւրեր, որքան կը կամենայիք... Պսակուելուցս յետոյ միայն իմացայ, որ կինս իր առաջուայ սիրեկանից մի 10 տարեկան աղջիկ ունի՝ Զինաիդա անունով: Երեւի կը ճանաչէք. նա է, որ ամբողջ օրը զուգուած՝ զինուորականների հետ փողոցները շրջում է և որի համար անցեալ տարի մի թուրք իր երկու ընկերներին սպանեց... Ես վճռեցի հպատակուել ճակատագրի կամքին ու նոր կեանք սկսել: Երկու ամսից յետոյ կինս երեխայ ծնեց, որը մի օրից աւել չ'ապրեց:

—Մի օր ես երեկոյեան ուշ պարապմունքից տուն վերադարձայ և ինչ եմ տեսնում. մի գիւղացի, բարձրահասակ, առողջ երիտասարդ նստած կնոջս մօտ՝ սիրաբանութիւններ էր անում: Ես մնացի դրան չեմքում կանգընած. աչքերիս չէի ուզում հաւատալ: Դեռ ուշքս դուրս չը ժողոված, տեսնեմ այդ անկոչ հիւրը վեր կացաւ, մօտեցաւ ինձ, իր ուժեղ ձեռքով բռնեց ուսիցս,

դուրս հրեց՝ ասելով. «Երբ իրաւունք կը տանք, այն ժամանակ կը գաս»։ Եւ դուրս եկայ և այլևս չը վերադարձայ։ Սանամայր Մարիամը ինձ մի դժբախտութեան մէջ ձգեց, բայց մի զէնք էլ տուաւ դրա դէմ կռւելու. եւ գիմեցի ուղիղ գինետուն։ Այնտեղ այնքան խմեցի, որ թաւալազէր ընկայ յատակի վրայ։ Առաւօտեան զարթնեցի ու ինձ գտայ գինետան բակում. յիշեցի գլխի եկածը և դարձեալ մտայ գինետուն։ Այդտեղ գիւղացիները հաւաքուել էին՝ իրանց կոկորդները դովացնելու. նրանք ինձ նկատելով՝ թէ զարմացան և թէ ուրախացան, որ իրանց չըջանն եւ մտել. սկսեցին ամեն կողմից հիւրասիրել. եւ նրանց չըջանում քիչ մոռցայ ինձ հետ պատահածը և լաւ էի զգում։ Գիւղացիներից մէկը, որի անունը Անդրէյ էր, շատ ախորժելի ձայնով երգում էր. նրա ձայնը զուարթ էր հնչում, ու եղանակները մեղամաղձոտ էին։ Եւ յետոյ իմացայ, որ նրան երգել տուողն էլ իր դարդերն էին. նրա աղջիկը փախել էր հայրենական տնից ու ապրում էր մի սպայի հետ։ Գիւղացիները մէկ-մէկ դուրս եկան. մնացինք եւ, Անդրէյը և մի ուրիշ գիւղացի, որին կոչում էին «դժբախտ Միտիա», վերջինիս գեղեցկուհի կինը սարսափելի անբարոյական էր. Միտիան ամենքից շատ էր խմում. լաւ բախտակիցներ էինք ժողովուել, չէ՛։ Սկսեցինք խմել ու զանազան արկածներ պատմել մեր կեանքից. իսկ Անդրէյը մէջընդմէջ երգում էր։ Որքան գրաւում էր նա ինձ իր երգով. նրա երգերից շատերը իր յօրինածներն էին. օրինակ՝ յիշում եմ նրա ամենասիրելի երգից մի կտոր. «Առտուած մարդկանց մաքուր ստեղծեց. նրանք ամենքը հերկում էին ազատ երկիրը. բայց նրանց միջից դուրս եկան հրէշներ ու սկսեցին գիւղացիների արիւնը ծծել. գիւղացին էլ մարդ է. նա ամենքից խեղճ է, ամենքից խաւար»...

— Դրանից յետոյ իմ բնակարանս դարձաւ գինետան կողքին գտնուած ցանկապատ խոհանոցը, յաճախելու տեղս գինետունը, չըջելու տեղս—երբ ուշս դըլ-

խիս է—ահա գերեզմանատան մօտ տարածուած փոքրիկ անտառը. այնտեղից մօտ է և գետը իր վշտոցով, և գերեզմանատունը իր միշտ լուռ բնակիչներով... իսկ ընկերներս—Անդրէյն ու «դժբախտ Միտիան»:

—Եւ այս բոլորը ահա այն դազանն արաւ:

Այդ ասելով նա ձեռքը մեկնեց դէպի բժշկի բընակարանը: Թովմասը արձանի պէս կանգնած էր առաջս իր ցնցոտիներով ու բարկութիւնից դողացող իրանով. նրա կարմրած աչքերից կայծեր էին դուրս ցայտում, իսկ դողացող շրթունքները իրար էր սեղմուել:

Արդէն ուշ գիշեր էր. չրջակայքը բոլորովին լուռ. մէկ գետակն էր ձորում շառագում ողբ ու կականով, և զով բամին թեթեւ սլսլացնում էր ծառերի տերեւները մեր գլուխների վրայ: Լուռ էինք:

—Է՛հ կեանքը... հառաչեց Թովմասը՝ վեր կենալով. —բարի գիշեր, բարեկամ:

Եւ նա հեռացաւ մոլոր քայլերով, ես նայեցի նրա երերուող ստուերին, նա շուտով կորաւ խաւարի մէջ, իսկ ես դեռ երկար, երկար նստած էի միեւնոյն տեղում և խորհում էի—է՛հ, կեանքը:

ՄՈՒՐԷՆ